

պով ըմբռներ խնդիրն ու տաճկահայերի ինքնավարութեան հարց բարձրացնելու տեղ, ուղղակի գլուխ կանգներ ամբողջ Առաջաւոր Ասիայի ազատարար շարժման»: Զալեսնն ինքը համոզւած է, որ լաւ կը լիներ: Եւ ո՞չ միայն Առաջաւոր Ասիայում, Ռուսաստանում էլ, ամէն տեղ վկտ է որդեգրել միջազգային ֆալքականութիւն: «Դաշնակցութեան մնում է այժմ մի քայլ եւս անել առաջադիմութեան նախապարհի վերա եւ դանուալ միջազգային իր գործունեութեան բոլոր տեղերում»: Պէտք է «համերաշխ, միացած ուժերով գագենի մեր շուրջը ցրւած բոլոր սորուկ ազգաւրինեների ազատութեան, ընդհանուր բարօրութեան, իսկ ինչ վերաշերտում է մեր ազգային շահերին, նախօրօք չյուզենի նորանց ապագայ վիճակով, որովհետեւ ընդհանուր նպատակին հասնելով՝ մենի բաւականութիւն տած կը լինենի եւ բոլոր մասնաւոր ազգայնական-ուսիսատական պահանջներին, որովհետեւ մեր օրերում չկայ պետական ազատութիւն առանց այդ պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների օրինաւոր պահանջների իրագործման»:

Իբրև եզրափակութիւն, Զալեսնը Հ. Յ. Դաշնակցութեան վերապահում է «վերին աստիճանի պատուաւոր», «պատմական» դեր — «մի դեր, որ աւելի բարձր է քան միայն սեփական ազգի շահերին ծառայելը, այն է՝ լինել առաջնորդող եւ զեկալարող Առաջաւոր Ասիայում ապրող բոլոր թշւառ եւ բնակալական լուծի տակ տառապող ազգերի ազատարար շարժման գործում»:

Համաշխարհային պատերազմի տարիներին թժ. Զալեսնը գտնուում էր արտասահմանում եւ 1919թ. Զիցերիայում գրել է այս համառու յուշերը: Նրանի որոշ չափով լրացնում են Քրիստոնեակորի յուշերը («Հայրենիք» ամս. 1924թ. օգոստոս) եւ արժեքաւոր են մեր պատմութեան նախադաշնակցական շրջանի յուսաբանութեան համար:

1920թ. թժ. Զալեսնը, ոգեւորւած Հանրապետութեան ստեղծումով, անցաւ Հայաստան եւ իբրև պահանջման դեկանականի դեկանականի պահանջման մեջ մասնակի մասնակցի:

## „ՀԱՅՐԵՆԱՍԻՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ“

ԲԺ. ՄԻՔ. ԶԱԼԵՍՆ

«1882 թւի գարնանային մի առաւօտ, Մոսկվայում, ուսանողական մի փոքրիկ սենեակում, ժողովւել էին հետեւեալ անձինք.

Արէլեան Ներսէս, Տերնիկական Ուսումնարանի վերջին տարւայ ուսանող, չամախեցի:

Արտեմեան Մարգար, բժշկական ուսանող, շուշեցի:

Զալեան Միքայէլ, բժշկական ուսանող, գանձակեցի:

Ներսէսեան Դաւիթ, Պետրովսկայա Երկրագործական ճեմարանի ուսանող, շամախեցի:

Վէքիլեան Մարտին, նոյն ճեմարանի աղաս ունկնդիր, ալեքսանդրապոլցի: Շուտով խմբին աւելցաւ եւ բժշկական ուսանող Կարապետ Տէր-Խաչատրեանը, երեւանցի:

Ժողովի նպատակին էր, ըստ բալկանեան աղջերի օրինակի, չիմնել մի գաղտնի ընկերութիւն մեր տաճկահայ աղջակիցների վիճակի մասին հոգալու համար, յեղափոխական միջոցներով, քանի որ օրինաւոր համարւած ձանապարհներն թէ փակ էին եւ թէ, որ գլխաւորն է, մեզ թւում էին չափազանց դանդաղ եւ տաղտկալի:

Երկար վիճարանութիւններից յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եղրակացութեան.—

1) Համարել յիշեալ ընկերութեան կենարոնը կաղմւած ներկայ անձինքներից՝ «Հայրենասէրների Միութիւն» անւան տակ:

2) Կոչ անել թուուցիկների միջոցով ամէն տեղի հայերին եւ ամենից առաջ Կովկասի հայ երիտասարդութեան՝ բաժանմունքներ հիմնել ամէն տեղ թէ Ընկերութեան զաղափարները տարածելու եւ թէ նիւթական միջոցներ ձեռք բերելու համար: —

Անմիջապէս, այսինքն՝ շատ չանցած, կաղմւում է առաջին թուուցիկը, խմբութիւնով տպագրւած, այն ժամանակւայ ուստարմատական յեղափոխականների ծրագրով, յարմարեցրած, ի հարկէ, Ընկերութեան մասնաւոր նպատակներին:

Այս կոչը եւ Ընկերութեան անդամ՝ Դ. Ներսիսեանի նոյն տարւայ ամառը արած ճանապարհորդութիւնը Կովկասում, մանաւանդ, Թիֆլիսում մեծ ընդունելութիւն էին գտել եւ կենդանութիւն առաջ բերել հայեական խաւերում: Այդ խակ միջոցին, Թիֆլիսի երիտասարդութիւնը (միջնակարգ ուսումնարանների աշուկերուն) շատ բուռն շարժման մէջ էր նոյն վերեւ յիշւած ուստարագիտական (Յամլա և Յօլյ) ծրագրի շուրջը, տանց աղջերի խորութեան. ուսւ, հայ, վրացի խառն շրջաններ կաղմած, ընդհանուր ոսւս յեղափոխական գործին ծառայերու նպատակով:

«Հայրենասէրների Միութիւն» կոչը ծառայում է, կարելի է ասել, իբրեւ սկզբնապատճառ այդ շրջանների (Կրյոկ) հայ մասի տաճկահայկական հարցով զրագերւ համար, որպիսի ուղղութիւնը գնալով պատկառմ է 1889 թւականին նոյն Թիֆլիսում «Դաշնակցութեան» հիմնադրութեամբ\*):

Նոյն 1882 թվի աշնանը Թիֆլիսից գալով Սոսկւա՝ իրենց ուսումն շարունակելու՝ միանում են «Հայրենասէրների Միութեան» խմբին երկու եղբայր՝ Սիմէոն եւ Սրապիոն Տէր-Գրիգորեաններն, վաղարշապատշի, եւ օր. Թամարա Աղամեանը՝ Թիֆլիսեցի (հետագայում՝ տիկին Դ. Ներսէսեան):

«Հայրենասէրների Միութիւնը» հրատարակել է պարբերա-

\*.) Բժ. Զալեանը սխալում է թւականի վերաբերմամբ. Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը եղել է 1890թ. ամառ:

բար, թէպէտ եւ անկանոն կերպով, մօտաւորապէս հինգ համար իր թոռոցիկների, մինչեւ 1885-86 ուսումնական տարւայ վերջը, երբ հիմնադիրների Մոսկվայից հեռանալու եւ զանազան կողմեր ցըւելու պատճառով, հայկական ազգասիրական-յեղափոխական գործունէութեան կենարոնը անցնում է թիֆլիս, ուր, քիչ յետոյ, հիմնւում է, ինչպէս վերեւ ասացինք, չ. Յ. Դաշնակցութիւնը:

Բացի իր պարբերական հրատարակութիւններից, «Հայրենասէրների Միութեան» յաջողւել էր ձեռք բերել Մոսկվայում առաջին գաղտնի հայկական տպարան, որ նա ուղարկեց թիֆլիս, որուեղ մի ժամանակ տեղական գաղտնի շրջանների նպատակներին ծառայելուց յետոյ, վերջ ի վերջոյ, անցաւ Դաշնակցութեան տրամադրութեան տակ\*):

«Հայրենասիրական Միութեան» հիմնադիր անդամներից երկուար (Ն. Արէլեան եւ Մ. Զալեան) բախտի բերմամբ պատահելով իրար Բագրում՝ հիմնում են այնտեղ, նոր բարեկամների աջակցութեամբ, «Դաշնակցութեան» Բագրայ ճիւղը, որ մանաւանդ նիւթական տեսակէցից նշանաւոր դեր է խազեցել Դաշնակցութեան գործունէութեան շրջանում 90ական թւականներին: Յիշած անձնաւորութիւններից կենդանի են այժմ (1919թ.) միայն Ն. Արէլեանը՝ ինժիներ, Մ. Զալեանը՝ բժիշկ, Սիմէոն Տէր-Գրիգորեանը՝ ուսուցիչ եւ բժ. Կ. Տէր-Խաչատրեանը: Մ. Վէքիւեանի վիճակը անյայտ է ինձ:

## II

## „ԱԱՍՈՒԻՆ“ ԿՈՄԻՏԵՆ

Մոսկվայի ուսանողութիւնը առանձնապէս աչքի լնինող զերէ է կատարել հայ յեղափոխական շարժման մէջ, մանաւանդ սկզբի շրջաններում: Արդէն 82 թւականից սկսած Մոսկվայում գործում էր «Միութիւն Հայրենասէրների» յեղափոխական կազմակերպութիւնը, որ կատ էր պահում թիֆլիսի հետ եւ հրատարակնց առաջին հայ յեղափոխական թերթը՝ «Ազատութեան Աւետարեր», ինչպէս եւ մի շարք թոռոցիկները: Մոսկվայի ուսանողութեան կողմից 1889ին երկիրն ուսումնասիրելու նպատակով թիւրքահայաստան ուղարկեց Լեւոն Սարգսեանը, որի «Այց թիւրքաց Հայաստանի» գիրքը լոյս տեսաւ Մոսկվայի ուսանողների նիւթական միջոցներով:

\*.) «Հայրենասէրների Միութեան» կազմութիւնը Քր. Միքայէլեանի յուշերում մի քիչ տարբեր ձեռով է ներկայացւած: անունն էլ այնտեղ ուրիշ է՝ «Միութիւն Հայրենասէրներ»: Իրադէս կազմակերպութիւնը կոչում էր «Միութիւն Հայրենասէրների», ունէր կնիք՝ գաջոյն եւ ատրճանակ խորհրդանշանով, եւ հրատարակեց մի քանի համար՝ «Ազատութեան Աւետարեր» թերթը, որ Քրիստոնէարք համարում է հայերէն առաջին յեղափոխական թերթը: Այս մասին տես եւ Մ. Վարանդեանի «Հ. Յ. Գ. Պատմութիւն» գիրքը, էջ 16—17: ԽՄԲ.